

ՀԱՅԿԿԱՆ ԲԱՐԵԿՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ

2. Բ. Ը. Միութեան Ոսկի Յորելեանի պատմական նշանակութիւն ունեցող եղելութիւնը արժանաւոր շուքով տնտեսական կարգի կեդր. վարչ. ժողովը անուանեց Յորելեանի կեդր. Յանձնախումբ մը, ատենագիտութեամբ Փոխ-Նախագահ Տիար Յարութիւն Յ. Թուրուպեանի:

Այս Յանձնախումբը իր յաշորդական նիստերուն մէջ նկատի ունեցաւ Յորելեանի առթիւ կատարուելիք կարգ մը ձեռնարկներ. ինչպէս նաև տնտեսականութեանց ընդհանուր ձգտողի մը արձեռն ապա վաւերացուցանեց կեդր. վարչ. ժողովի կողմէ: Յանձնախումբը խոսն նիստ մը ունեցաւ նաև Ամերիկայի կեդր. Յանձնաժողովին Յորելեանի Յանձնախումբին հետ, այս երկրին մէջ սարքուելիք հանդէսներուն կամ հաւաքողութեան մասին:

Նախատեսուած կարգադրութիւնները կ'ամփոփուին հետևեալ կերպով.

1. Կէս միլիոն տոլարի հանդանակութիւն (Այս մասին խօսուած է Նախագահին յարակից յայտարարութեան մէջ):
2. Անդամագրական Ընդհանուր Արշաւ (Նախագահը այս մասին եւս արտայայտուած է):
3. Յիանձնակի առթիւ Հ. Բ. Ը. Միութեան պատմութիւնն ու գործերը ներկայացող ամփոփ գրքոյկի մը հրատարակութիւն:
4. Մրցում մը հայ գրողներու և արուեստագէտներու միջև՝ իրենց ստեղծագործութեամբ ոգեկոչելու համար Հ. Բ. Ը. Միութեան յիսուն տարուան կեանքն ու կատարած ազգայնապահման գործերը: Մրցումին նիւթերը հետևեալներն են.

- ա. — Քերտուած մը, գրող բանաստեղծին լայն ներշնչումին համապատասխան երկարութեամբ:
- բ. — Թանձրախաղ մը երեք արարով կամ մէկ ժամ տեսողութեամբ:
- գ. — Ծածկակազ կտոր մը, որպէս քայլերդ կամ մաղբերդ բառերով միասին:
- դ. — Խորհրդակար մը, յարմար ծաւալով և իւզաներկ:

Այս գործերը, որոնք պէտք է ճշմարիտ գեղարուեստական արժէք ներկայացնեն, պիտի քննուին իւրաքանչիւր ճիւղի յատուկ մասնագէտներէ կազմուած Յանձնախումբերու կողմէ և ընդունուած ամէն մէկ նիւթի համար պիտի տրուի մրցանակներ:

Ա. Մրցանակ՝	500 Տոլար,
Բ. Մրցանակ՝	300 Տոլար:

5. Կեդր. վարչ. ժողովը պիտի պատրաստէ Հ. Բ. Ը. Միութեան մեծանուն հիմնադրեր Պողոս Փաշա Նուպարի յիշատակին նուիրուած վիտմը, զոր պիտի յանձնէ իր երկնց օրգուշն: Միութեանս Բարերար Անդամ Զարեհ Պէյ Նուպարի, Նուպարեան ընտանիքին մէջ սերունդէ սերունդ պահուելու համար:

6. Յորելեանի առթիւ, կեդր. վարչ. ժողովը Տիար Ա. Գարակէօզեանի պիտի տայ սակի վիւաք մը, ի նշան երախտագիտութեան այն իմնկազմին ծառայութեանց համար զորս մասուցած է Հ. Բ. Ը. Միութեան, իր երկարամեայ նախագահութեան շրջանին:

7. Յորելեանի հանդէսները պիտի կատարուին 1956ի ընթացքին, իւրաքանչիւր վայրի մէջ յարմար տեսնուած թուականին: Նախընտրելի է որ անոնք սկսին Հ. Բ. Ը. Միութեան հիմնադրութեան տարեկարծին, Ապրիլ 15-ին, արայ եթէ կարգ մը տեղեր ստեղծական պատճառներ գոյութիւն ունենան, այդ թուականը կրնայ կանխուիլ:

8. Գահիրէն ըլլալով Հ. Բ. Ը. Միութեան հիմնադրութեան վայրը, կեդր. վարչութեան քիւմ բաղձանքն է որ եզրկտոսի կեդր. Յանձնաժողովին կողմէ սարքուելիք հանդէսը կատարուի իր ուն տարեկարծին օրը, Ապրիլ 15-ին:

9. Աշխարհի ամէն կողմերը, ուր Հ. Բ. Ը. Միութեան մարմին մը գոյութիւն ունի, 1956 Ապրիլ 15ի կիրակի օրը պատրագ պիտի մասուցուի և հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Միութեան հանդուցեայ Հիմնադրիւնը, Բարերարներուն ու վաստակաւորներուն յիշատակին:

Ամէն վայրի մէջ, մեր Մասնահիւղերը հոգ պիտի տանին որ Բարեգործական անդամները այս արարողութեանց ներկայ ըլլան մեծ թիւով: Յետոյ, պատարագէն վերջ կամ ըստ յարմարութեան նոյն օրը կէս օրէ ետք, կարելի եղածին չափ մեծ բաղձութեամբ ուխտագնացութիւն մը պիտի կատարուի տեղական գերեզմանատունը կամ գերեզմանատունները, այցելելու համար հոն հանգչող մեր վաստակաւորներուն և անդամներուն շիրմիները:

10. Իւրաքանչիւր վայրի մէջ Յորելեանի հանդէսներուն յայտագիրը տեղական մարմինները իրենք պիտի կազմեն: Յորելեանի Յանձնախումբին թելագրութիւնն է որ այս հանդէսներուն հրաւիրուին տեղական իշխանութիւններէն շարժարտօսիւն պաշտօնատարներ:

11. Բոլոր հանդէսներուն մէջ պիտի բաժնուին յիանձնակի մեծաւնէր կամ զարգացուածներ. Պողոս Փաշա Նուպարի նկարով, զորս

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրենք 1955 ՏԱՐԱՅ ԸՆԲԱՅԳԻՆ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբավայրերու տուած հետեւեալ բարեպաշտական նուէրները:

- 1. — Ազէճհրցի Այրի Տիկին Կիւլիանէ Ալեքսանեանը վեց հատ Սարկաւազի շապիկ կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարին:
- 2. — Փարիզէն (Արժօրվիլ) Տիկին Ալիո Ճօնկուլտայեան Ս. Գլխաղբին կը նուիրէ պարզ փուլերով բանուած ճերմակ արլասի վրայ սկիհի ծածկոց մը, և ժառանգաւոր աշակերտներուն 30 հատ ներքնաշապիկ և 30 վերնաշապիկի կտոր:
- 3. — Պէլլուսթէն Ատանայի Տիկ. Զապէլ Մելքոնեանը Ս. Գլխաղբին կը նուիրէ մէկ ճերմակ ինքնաձեռագործ ծածկոց մը, ձեռամբ Տիկ. Եղիսարեթ Մաքինիստեանի:
- 4. — Հալէպէն Այնթապցի Օր. Էֆրօնիա Ալթունեանը Ս. Յակոբեանց Տաճարին կը նուիրէ մէկ կապոյտ յատարկով և վրան ճերմակ Միլանի ինքնաձեռագործ սկիհի ծածկոց մը:
- 5. — Հալէպէն Կիւրինցի Օր. Մարի Վարդապետեանը մէկ ստեղծագործ մասի ծածկոց կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարին:
- 6. — Երուսաղէմացի Տիկ. Վրքթօրիա Պէտէվեան և որդին Գէորգ, մէկ ճերմակ

մետաքսեայ Աւետարանի բռնիչ կը նուիրեն Ս. Յակոբայ Տաճարին:

- 7. — Հալէպէն Այնթապցի Այրի Տիկին Սանդուխտ Գրքճալեանը Ս. Յակոբայ Տաճարին կը նուիրէ ճերմակ-դեղին փուլերով կտոր սկիհի ծածկոց մը:
- 8. — Հալէպէն Այնթապցի Տիկին Ուլսաննա Տէրվիշեանը Ս. Յակոբայ Տաճարին կը նուիրէ ճերմակ զրակալի ծածկոց մը:
- 9. — Տէտէաղածէն Կարապետ Ժամակոչեանը արծաթէ լեզու մը կը նուիրէ Ս. Յակոբին, իր անխօս Վերսիքա աղջկան համար, ձեռամբ Ռաֆելա Սաշիկեանի:
- 10. — Հալէպէն Զէյթունցի Տիկ. Նուարդ Փաթանեան մէկ ցալլօն կապոյտ շղարշ կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարին:
- 11. — Հալէպէն Զէյթունցի Տիկին Լուսարեր Պալճեան մէկ ցալլօն կապոյտ շղարշ կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարին:
- 12. — Պրուսացի Մուսուլարեան Տիկին Մարի Շաշմեան ոսկի և մարգրիտ M (Յ հատ) տառերով ապարանջան մը կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարի Ս. Աստուածածնայ պատկերին:
- 13. — Պաղտատէն Վանեցի Յարութիւն Աթանասեան և Սիրվարդ Պաղտատեան գոյգ մը քորփուրայ կը նուիրեն Ս. Յակոբայ Տաճարին և Ս. Հրեշտակապետաց Եկեղեցիին:
- 14. — Երուսաղէմէն, Տիկին Նազելի Երսէսեանը մանրակազոյն ոսկի ծաղիկներով բանուած երկար քիւլ մը կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարին:
- 15. — Պիթլիցցի Այրի Տիկին Արաքսի Ալվանտեան երկու հատ Աւետարանի բռնիչ կը նուիրէ, մին Ս. Յակոբայ Տաճարին՝ իսկ միւսը Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ:
- 16. — Սպարթացի Տիկին Սիրանոյշ Սիմայեան մէկ ոսկի մատանի փոքր ամբիսքարով, կը նուիրէ Ս. Յակոբայ Տաճարի Ս. Աստուածածնայ պատկերին:
- 17. — Երուսաղէմէն Այնթապցի Տիկին Էլիզա Մէնէշեանը մէկ ճերմակ սեղանի ծածկոց կը նուիրէ Ս. Աստուածածնայ Տաճարի Աւագ Սեղանին:
- 18. — Երուսաղէմէն Օր. Հնազանդ Տէր Կարապետեանը Ս. Յակոբայ Տաճարին կը նուիրէ զոյգ մը հնդկական գործ պղնձէ զարդարուն ծաղկամաններ:
- 19. — Երուսաղէմացի Յակոբ Գրիգոր Մնացականեանը մէկ արծաթաման մեծ կանթեղ մը կը նուիրէ Ս. Յակոբի, իր աշխատութեան անդրանիկ վաստակին:

Կեզր. Վարչ. Ժողովը պատրաստել տալով պիտի ուղարկէ իր շնորհակցներուն:

12. Նիւ Եօրքի մէջ Յորեյեանի տօնակատարութիւնը պիտի սարքուի Ամբրիկայի Կեզրեանական Յանձնաժողովին նախաձեռնութեամբ:

Ան տեղի պիտի ունենայ 1956 Յունիս 17-ին Միութեան Ամբրիկայի Պատգամաւորական Ժողովին յաջորդ օրը. Կիրակի, Ուլարտիք Ասթորիա պանդոկին մէջ:

Երգարուած է ժամը 1-էն՝ 4.30 Ժողովրդային հանդէս մը ունենայ՝ ազատ մուտքով, իսկ երեկոյին՝ ճաշկերոյթ:

Թէև Ամբրիկայի բոլոր Մասնաճիւղերը Յորեյեանի իրենց առանձին տօնախմբութիւնները պիտի ունենան, բայց հրահանգ պիտի տրուի որ անոնք պատգամաւորները զրկեն Նիւ Եօրքի հանգիստութեանց:

13. Նախագահ Տիար Ա. Մանուկեան պիտի աշխատի ներկայ գտնուելի Ամբրիկայի գլխաւոր քաղաքներուն մէջ սարքուելիք հանդէսներուն՝ մինչև աշուն, իսկ Սեպտեմբերին արտասահման շուրջ երեք ամիս տեւող ճամբորդութիւն մը պիտի կատարէ և այդ շրջանին գանազան մայրերու մէջ կատարուող տօնախմբութեանց և ներկայ պիտի ըլլայ:

Լուսարարապետ  
ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՏԷՐԵԱՆ